ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 06.11.2024թ. N 377/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.11.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ.Աթոյանը, Գ.Մելքոնյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր Ռոման Սողոմոնյան Ռաֆիկին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները: Ռոման Սողոմոնյան Ռաֆիկին սահմանված ժամկետում համակարգի միջոցով չի շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունները (Մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված N 1-ը՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև մասնակիցը չի նշել իր կազմակերպաիրավական կարգավիճակը):

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնման հրավերի 8.11-րդ կետի՝ Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ Ռոման Սողոմոնյան Ռաֆիկին սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

2" ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

3. Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.15 կետի Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի տվյալները համապատասխան հիմքերով՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, գրավոր ուղարկել լիազորված մարմին, տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար («Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ՝ մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյան

Անդամներ՝ Մ.Աթոյան

Գ.Մելքոնյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան